ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԳԻՐՔ № 26

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ

ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐՁԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԵՆ ԴՈՐԾԵՐԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.

39381

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԳԻՐՔ № 26

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐՈՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ

ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հ 23677

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ,

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 3646
ԳՐՍՌԵՊՎԱՐ № 804 դ.
ՏԻՐԱԺ 1300

ՔԱՂՎԱԾՔ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻՆ ԱՌԸՆՔԵՐ 1928 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ՝ ԳԱՎԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ԿԱԶՄԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ, ԳԱՎՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԵՂԵՐԻՆ ՏՐՎԵԼԻՔ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 1928 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

13. Ընդգծել, որ վերատուգիչ հանձնաժողովների աշխատանքի մեջ նկատվում է կենդանություն, սակայն այդ աշխատանքը դեռ չի կրում ընդհանուր բնույթ և վերատուգիչ հանձնաժողովները վորոշ վայրերում մատնված են անգործության կամ չեն գիտակցում իրենց առնելիքները։ Անհրաժեշտ է համարվում հետևյալ միջոցները կիրառել.

ա. վերատուգիչ հանձնաժողովների կազմի մեջ մտցնել ակտիվ գյուղացիների հետ միասին, նաև գյուղի աշխատավոր ինտելիգենտ տարրերին.

բ. հետևել, վորպեսզի վերսաուգիչ հանձնաժողովները պարբերաբար ստուգեն գյուղխորհուրդների ֆինանսա-տնտեսական գործունեությունը և ստուգումների արդյունքների մասին զեկուցել գյուղհասարակական ժողովներում, գյուղխորհրդի նիստերում, գավառակային գործկոմների նիստերում՝ վերջիններիս առաջադրությամբ.

գ. հսկողություն ունենալ վերսաուգիչ հանձնաժողովների և գյուղխորհուրդների փոխհարաբերության վրա և միջոցներ ձեռք առնել այս ասպարեզում գոյություն ունեցող թերությունները վերացնելու։ Վերսաուգիչ հանձնաժողովներն իրենց ստուգումներով և գործնական առաջադրություններով պետք է ուժանգակեն գյուղխորհուրդներին վերացնելու ապպարատներում բուն դրած թերությունները.

դ. հսկել, վորպեսզի գյուղխորհուրդները տեխնիկապես ընդառաջեն վերսաուգիչ հանձնաժողովներին։

Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ

Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ

ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՀ գյուղական խորհուրդներին կից վերստուգիչ հանձնաժողովները կազմակերպված են Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից 1926 թ. ապրիլի 20-ին հաստատված կանոնադրության հիման վրա։

Այդ հանձնաժողովների դերը ու նշանակությունը բավական մեծ է մեր գյուղերում, նրանց անելիքները սերտ կերպով կապված են աշխատավոր գյուղացիության շինարարական աշխատանքների հետ, ահա թե ինչու անհրաժեշտ է համարվում մանրամասն կանգ առնել այդ կանոնադրության վրա և լուսաբանել նրա կարևոր կողմերը, վորպեսզի յուրաքանչյուր գյուղացի, յուրաքանչյուր վերստուգիչ հանձնաժողովի անդամ հնարավորություն ունենա ծանոթանալու իր իրավունքներին ու պարտականություններին և պարզ պատկերացնի այդ մարմնի անելիքները։

ԻՆՉ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Կանոնադրության առաջին հոդվածում վորոշակի ասված է, վոր «վերստուգիչ հանձնաժողովը գյուղական խորհրդի ֆինանսա-տնտեսա-

կան գործունեության հասարակական վերահսկողության մի մարմին է...»։

Ի՞նչ է նշանակում այս. այս նշանակում է վոր ընտրողների ընդհանուր ժողովը ընտրելով այդ մարմինը, նրա վրա դնում է մի հիմնական պարտականություն՝ հսկելու գյուղխորհրդի, նրա սեկցիաների, գյուղխորհրդի տեսչության տակ գտնվող այս կամ այն ձեռնարկությունների ֆինանսա-տնտեսական գործունեության վրա, պարզ ասած՝ նրան իր դիտող աչքն է դարձնում ժամանակին հետևելու գյուղխորհրդի, նրա յենթակա մարմինների գործունեությանը հիշված ասպարեզում։

Գործնականում սակավ չեն այն դեպքերը, յերբ գյուղխորհրդի վերատուգիչ հանձնաժողովը՝ դուրս գալով իր իրավունքների սահմաններից, քննության է առնում նաև գյուղխորհրդի ընդհանուր գործունեությունը և փորձում է հանում այն մասին՝ լավ թե վատ է աշխատել գյուղական խորհուրդը։

Այս յերևույթը պետք է համարել միանգամայն անկանոն այն պարզ պատճառով, վոր գյուղական խորհուրդների ընդհանուր գործունեությունն ստուգելու աշխատանքները՝ համաձայն գոյություն ունեցող որենադրության՝ վերապահված են դավառակային գործադիր կոմիտեներին։

ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Դավառներից ստացված տեղեկությունները

ցույց են տալիս, որ մինչ այժմ մի շարք վայրերում թե գյուղացիները, թե գյուղխորհրդի և թե վերստուգիչ հանձնաժողովի անդամները ճիշտ չեն պատկերացնում թե վերստուգիչ հանձնաժողովն ինչպես և կազմակերպվում։

Գյուղական խորհրդի վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է գյուղական խորհրդի ընտրության հետ միաժամանակ՝ ընտրողների ընդհանուր ժողովում, մինչդեռ մեզ մոտ լեղել են դեպքեր, երբ վերստուգիչ հանձնաժողովի կազմը, նրա առանձին անդամների ընտրությունը կատարվել է գյուղական խորհրդի նիստերում։ Ի՞նչ խոսք, որ այս լերևույթը միանգամայն հակաօրինական է, որի դեմ պետք է կռվել։

Գյուղական խորհրդի վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած է լերեք անդամից և լերկու փոխանդամից։ Փոխանդամները փոխարինում են բացակայող անդամներին և վերջիններիի հեռացման դեպքում՝ անցնում են նրանց տեղը-անդամի իրավունքներով։ Այն դեպքերում, երբ վերստուգիչ հանձնաժողովի ամբողջ կազմը ցրվում է կամ փոխանդամների թիվը ընդարձակվում է, նոր կազմի և նոր փոխանդամների ընտրությունը կատարվում է ընտրողների նոր ժողովում, որը հրավիրվում է դատաուսուցչի գործկոմի թույլտվությամբ։

Վերստուգիչ հանձնաժողովն իր միջից ընտրում է նախագահ և քարտուղար։ Հանձնա-

ժողովը առանձին տեխնիկական ապպարատ չունի։ Եթե անհրաժեշտ է աշխատելու վայր, գրենական պիտույքներ, այն է՝ թանաք, գրիչ, թուղթ, մատիտ և այլն, այդ բոլորը վերատուգիչ հանձնաժողովին պարտավոր է տրամադրել գյուղական խորհուրդը։ Եթե վերջինը հրաժարվում է այդ աջակցությունը ցույց տալուց, գյուղխորհրդի վերատուգիչ հանձնաժողովը պարտավոր է անմիջապես այդ առթիվ տեղեկացնել գավառակային գործկոմին, իսկ գործկոմը պետք է առանց ձգձգելու քննության առնի այդ դանդաղը և միջոցներ ձեռք առնի վերջ տալու ստեղծված դրության։

ՈՎ ԿԱՐՈՂ Է ԸՆՏՐՎԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

Ինչպես տվեց սկզբում, գյուղական խորհրդի վերատուգիչ հանձնաժողովի նշանակությունն ու դերը մեծ է, նրա վրա ընտրողները և խորհրդային իշխանությունը կարևոր պարտականություններ են դնում. ահա ինչու վերատուգիչ հանձնաժողովի կազմի վրա խոշոր ուշադրություն է դարձվում, և ամեն պատահական մարդու թույլ չի տրվում մտնել նրա մեջ։

Գյուղխորհրդի վերատուգիչ հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել միայն այն քաղաքացին (տղամարդ թե կին), որ խորհուրդների ընտրության իրավունք է վայելում։ Միաժամանակ այդ հանձնաժողովի մեջ ընտրվող քա-

դաքայինները պետք է վայելեն հասարակության համակրանքը, նրանց հեղինակությունը աշխատավոր մասսայի աչքում. չպետք է ընկած լինի, այլապես գյուղացիները միշտ կասկածանքով կվերաբերվեն նրանց կատարած աշխատանքներին։ Գյուղխորհրդի վերատուգիչ հանձնաժողովի կազմի մեջ գյուղացիությունը պետք է մտցնի այնպիսի քաղաքացիներ, որոնք աչքաբաց են, որոնք գիտեն պաշտպանել համայնական շահերը, որոնք առանց քաշվելու ընդունակ են յերևան հանելու այն բացերը, թերությունները, որոնք գոյություն ունեն խորհրդային մարմինների գործունեության մեջ, և վերջապես պետք է մտցնել նրանց, որոնք ստուգման արդյունքների հիման վրա կարող են գործնական միջոցներ առաջադրել և այդպիսով գործնականում ոգնել գյուղական խորհուրդներին։

ՈՎ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

Վերատուգիչ հանձնաժողովի անդամ չի կարող լինել նախընտրական իրավունքներից զրկված քաղաքացին, գյուղի շահագործողը, գյուղի բռունցքը, գյուղի կրոնական ապատավորը և նման տարրերը։ Վերատուգիչ հանձնաժողովի անդամ չի կարող լինել նաև համապատասխան գյուղական խորհրդի անդամը, փոխանդամը, ինչպես նաև վերատուգիչ հանձնա-

ժողովի վերահսկողության տակ գտնվող հիմնարկությունների պաշտոնյաները։ Հարց կտան. ինչու համար են այդ ատիմանատիկումները։ Պատասխանը պարզ է։ Եթե Մեսրոբը գյուղխորհրդի անդամ է կամ ջրապացի, դարբնոցի գործերը վարողը և եթե նա նստած լինի վերատուգիչ հանձնաժողովի կազմի մեջ, վերատուգման աշխատանքների ժամանակ նա շահագրգռված չի լինի բաց անելու այն թերությունները, որոնք կան գյուղխորհուրդներում կամ այն ձեռնարկություններում, որտեղ նա աշխատում է, իսկ որոշ դեպքերում նա կաշխատի թաքցնել թերությունները, կեղծիքները, որոնք գոյություն ունեն այնտեղ, մանավանդ եթե իր մասն էլ խառն է այդ գործերի մեջ։ Վորպեսզի այդ տեղի չունենա և որպեսզի ընդհանրապես դեպի կատարվող վերատուգումները լինի վստահություն, որենքը արգելում է գյուղխորհրդի անդամներին և վերատուգիչ հանձնաժողովի վերահսկողության ենթակա հիմնարկությունների, ձեռնարկությունների պաշտոնյաներին ընտրվել հանձնաժողովի անդամ։

ՈՎ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻՆ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ԵՎ ԻՆՉ ԴԵՊՔԵՐՈՒՄ

Գյուղական խորհուրդները հաճախ վորոշումներ են կայացնում հեռացնելու վերատուգիչ

հանձնաժողովի այս կամ այն անդամին և նրա փոխարեն հրավիրելու մի ուրիշի։ Այս ապորինի և միանգամայն անթույլատրելի վորոշում է։ Վերստուգիչ հանձնաժողովի անդամին կարող է իր պարտականություններից հեռացնել ընտրողների ընդհանուր ժողովը, յեթե ժողովին ներկա յե յեղել ընտրողների առնվազն 35 տոկոսը, իսկ մինչև այդպիսի ժողով գումարելը հեռացնել կարելի յե դավառակային գործադիր կոմիտեի վորոշմամբ։ Հեռացումը հնարավոր է հետևյալ դեպքերում. յեթե ապացուցված է, վոր անդամը ակնհայտնի անփույթ է վերաբերվել դեպի իր պարտականությունները, այն է՝ չի հաճախել հանձնաժողովի նիստերին, խուսափել է վերստուգման աշխատանքներից, վերստուգումների վրա նայել է մատների արանքով. և այլն, և յերկրորդ՝ յեթե այդ անդամը գեղծումներ է արել։ Ցեղել են դեպքերը, յերբ վերստուգիչ հանձնաժողովի անդամները նկատել են բացեր, վատնումներ, յուրացումներ, բայց «վատամարդ» չդառնալու պատճառով զանազան կեղծ միջոցներով աշխատել են ծածկել հանցագործության հետքերը։ Ի՞նչ ասել կուզի, վոր նման անդամներ չեն կարող թողնվել վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ և պետք է հեռացվեն։

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Քիչ չեն այն դեպքերը, յերբ գյուղական

վերատուգիչ հանձնաժողովը ամբողջ տարին անդադար և մեծագույն ուշադրությամբ քննել և գյուղխորհրդի հաշիվները և զեկուցել գյուղի ընտրողների ժողովին։ Այս տեսակետից խուսափելու համար, որ ենթակա է վերատուգիչ հանձնաժողովից պահանջվում է, որ նա ժամանակ առ ժամանակ կատարի վերատուգումներ։ Նման վերատուգումներ գյուղխորհրդի վերատուգիչ հանձնաժողովը պարտավոր է կատարել առնվազն տարեկան ամիսը մեկ անգամ։ Եթե գյուղական խորհուրդն ընտրվել է, ասենք, հունվարի 1-ին, ապա դեպքում առաջին ստուգումը հանձնաժողովը կատարելու է մարտի 1-ից վաղ ուշ, երկրորդը՝ հուլիսի 1-ից վաղ ուշ, երրորդը՝ հոկտեմբերի 1-ից վաղ ուշ, և վերջին վերատուգումը՝ դեկտեմբեր 1-ին, այսինքն՝ նոր ընտրությունների մեկ ամիս առաջ (եթե վերընտրությունը ենթադրվում է կատարել հետևյալ տարվա հունվարի 1-ին)։

Սրանից, իհարկե, չպետք է հետևցնել, որ եթե վերատուգիչ հանձնաժողովը ցանկանա երկու ամիսը մեկ անգամ կատարել վերատուգումներ, նրան այդ թույլ չի տրվի։ Վերատուգիչ հանձնաժողովը կարող է ստուգումներ կատարել և՛ ամիսը մեկ անգամ և՛ երկու ամիսը մեկ անգամ, և դրա համար վաղ վաղ նրան չի մեղադրի, սակայն հանձնաժողովը ենթակա է պարտականություն կարժանանա, եթե երեք ամիսն

անցնի՝ և նա մի անգամ ստուգած չլինի գյուղխորհրդի ֆինանսա-տնտեսական գործունեությունը։

Բացի հերթական ստուգումներից վերստուգիչ հանձնաժողովը կարող է կատարել նաև արտակարգ ստուգումներ թե՛ իր նախաձեռնությամբ և թե գավառակային գործադիր կոմիտեյի առաջարկությամբ։ Բերենք մի օրինակ։ Վաղը վերստուգիչ հանձնաժողովը տեղեկանում է, որ դպրոցի շենքի կառուցման համար ինքնահարկման կարգով գանձված մեկ հազար ռուբլին գյուղխորհուրդը ծախսել է վարչական կարիքների վրա։ Ի՞նչ պետք է անի վերստուգիչ հանձնաժողովը։ Պարզ է. հերթից դուրս նա անմիջապես պետք է անցնի վերստուգման, պարզի գործի դրությունը և իր խոսքն ասի. ճի՞շտ է արդյոք այն լուրը, որ հասել է իրեն, թե պառավական բամբասանքներ են, որով սիրում են պարապել անգործ մարդիկ։

ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վերստուգիչ հանձնաժողովի առաջին հիմնական անելիքը այն է, որ նա վերստուգում է գյուղխորհրդի դրամի մուտքի, պահելու և ծախսելու կանոնավորությունը, միաժամանակ հսկելով, որ թե՛ այդ դրամները և թե՛ գյուղխորհրդի տրամադրության տակ գտնվող գույքերը ծախսվեն, ոգտագործվեն վորոշված նպատակներով և նպատակահարմար կերպով։

Ով աշխատել է գյուղում, նա լսած կլինի գյուղացու բողոքը՝ թե այսինչ գումարը նա հանձնել է գյուղխորհրդին՝ իսկ այժմս նրանից նորից պահանջում են այդ գումարը։ Հարցնում ես. ստացական ունե՞լ են։ Պատասխանը բացասական է։

Ի՞նչ պետք է եզրակացնել այստեղից — այն, որ դրամի մուտքը կանոնավոր չի եղել, դրամները ընդունելիս ստացականներ չեն տրված, որ ամեն ինչ հիմնված է գյուղխորհրդի նախագահի կամ քարտուղարի հիշողության վրա և այլն։ Իսկ այնտեղ, որտեղ նման խառնաշփոթություն է թագավորում, այնտեղ պղտոր ջրում ձուկ որսալը հեշտ է։ Գաղտնիք չէ նաև մեզ համար այն, որ գանձված գումարները չեն պահվում այն կարգով, որը սահմանված է օրենքով։ Ընդհանուր կարգադրություն է, որ ամեն մի ավելորդ կոպեկ գյուղական խորհուրդը մացնի վարկային ընկերություն, խնայողական գանձարկղ, բայց յեկեք՝ տեսնք, որ հաճախ գյուղխորհրդի ավելորդ գումարները մընում են նախագահի գրպանում, և նա այդ դրամները տալիս և սրան - նրան, գործադրում է ըստ իր քեֆի, ծախսում է այնպիսի բաների վրա, որ նրան վոչ վոք չի լիազորել։

Վերատուգիչ հանձնաժողովը կոչված է հսկելու, որ նման յերևույթներ տեղի չունենան։

Այժմ անցնենք գյուղխորհրդի տրամադրու-

թյան տակ գտնվող գույքերի պահպանման, ոգտագործման հարցին։ Վերցնենք մի այնպիսի կարևոր մեքենա, ինչ սերմացուիչ մեքենան է։ Ցերբեմն այդ մեքենան ամիսներով ընկած է մնում անձրևի, ձյունի, արևի, քամու տակ հաճախ այդ մեքենան ոգտագործում են վոչկանոնավոր ձևով, մի տեղից մյուս տեղը տանելիս խնամքով չեն վերաբերվում և այլն։ Արդյունքն այն է լինում, վոր մի տարուց հետո այդ կարևոր մեքենան փչանում է, անպետքանում, և գյուղացին մնում է անճար ու անելանելի դրության մեջ։ Գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովը այս բոլորը ժամանակին պետք է նկատի, քննության առնի նման թերությունները և միջոցներ առաջադրի վերացնելու նկատված բացերը։

Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է վերստուգել նաև գյուղական խորհրդի դրամական և նյութական հաշվետվությունը և նրա տեսչության տակ գտնված ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեությունը, պարզելով, թե ինչպես է դրված գործը այն ձեռնարկություններում, և նախագծելով բարվոքելու միջոցներ։ Բերենք մի որինակ։

Գյուղխորհրդի որատադրության տակ կարող է լինել մի այնպիսի ձեռնարկություն, ինչպես ջրաղացը, դինգը, դարբնոցը և այլն։ Ի՞նչպես է աշխատում ջրաղացը, դինգը, ոգուտ է բերում, թե ոչ, շենքը լավ վիճակի մեջ է

պահվում, թե կաուրը քանդված է, գերանները փտած, անձրևը թափվում է ներսը և այլն. այս բոլորով պետք է հետաքրքրվի վերատուգիչ հանձնաժողովը, ժամանակին միջոցներ մշակի և առաջադրի գյուղխորհրդին կիրարկելու, և չրաղացում, դինգում, դարբնոցում նկատված բացերը վերացնի։ Դժվար բան չէ, իհարկե, գրի առնել և տալ գյուղխորհրդին, թե չրաղացի հետևի պատերը պետք է վերանորոգվեն, կաուրի գերանը փոխվի, չրաղացում դրվի կանոնավոր կշեռք և այլն։ Վերատուգիչ հանձնաժողովը խիստ վերահսկողություն պետք է ունենա նաև գյուղում ամեն տեսակ հոժարական տուրքեր գանձելու և այդ յեղանակով հավաքած գումարները ծախսելու վրա։ Ներկայումս գյուղերում կուլտուրական և անտեսական կարիքների համար գանձվում են դրամ, նյութեղեն և այլ կարեվոր պարագաներ։ Այդ բոլորը արդյոք կանոնավոր կերպով են հավաքում, արդյոք գանձված միջոցներն իր նպատակին են գործադրում, թե վոչ. այս բոլոր հարցերը վերատուգիչ հանձնաժողովի քննության առարկան պետք է հանդիսանան։

Գյուղ-վերատուգիչ հանձնաժողովի պարտականությունների մեջ է մտնում վերատուգել նաև գյուղխորհրդի սեկցիաների, հողային համայնքի և գյուղական բյուջեյով պահվող հիմնարկությունների ֆինանսա-անտեսական գործունեությունը, վորտեղ այդպիսի բյուջե մտցը-

ված է։ Այդ ասպարեզում մինչև այժմ խոշոր անելիքներ չեն յեղել, սակայն հետագայում, յերբ մեր գյուղերը կունենան բյուջե, վերստուգիչ հանձնաժողովներն ամենայն ճշտությամբ պետք է հետևեն և այդ բյուջեյով պահվող հիմնարկների ֆինանսա-տնտեսական գործունեությանը։

Գյուղական խորհրդի վերստուգիչ հանձնաժողովը կարող է վերստուգման յենթարկել նաև այն հիմնարկությունների ու ձեռնարկությունների ֆինանսա-տնտեսական գործունեությունը, վորոնք գտնվում են գյուղի սահմաններում, սակայն վորոնք յենթակա չեն գյուղխորհուրդին և պահվում են գավառակային գործադիր կոմիտեի բյուջեյով։ Նման բնույթ կրող աշխատանքները հանձնաժողովը կատարում է միայն այն դեպքում, յերբ այդ հանձնարարել է նրան համապատասխան գավառակային գործկոմը։

ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԶԵՎԱԿԵՐՊԻ ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովների գլխավոր թերություններից մեկն ել այն է, վոր նրանք վերստուգման արդյունքները չեն ձևակերպում, դրի չեն առնում այն բոլորը, ինչ նրանք տեսել են վերստուգման ժամանակ, վորի հետևանքով հաճախ հնարավոր չի

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

Н 23647

լինում պարզել, թե ինչ աշխատանք և կատարել հանձնաժողովը կամ ինչ վիճակի մեջ է գյուղխորհրդի ֆինանսա-տնտեսական գործունեությունը։

Որենքը պարտականություն է դնում վերոհիշյալ հանձնաժողովների վրա, որ նրանք վերստուգումները կատարելիս արձանագրություն կազմեն, որի մեջ պետք է մանրամասն ցույց տրվի, թե ինչ և վերստուգվել, ինչ արդյունքներ է տվել վերստուգումը, և թե վերստուգիչ հանձնաժողովը ինչ է առաջարկում անել նկատած թերությունները վերացնելու համար։ Բերենք մեր նախկին դարբնոցի որինակը։ Վերստուգելով դարբնոցի աշխատանքները՝ վերստուգիչ հանձնաժողովը արձանագրում է, որ այսինչ որը կատարելով այնտեղ վերստուգումներ, գտել է որ դարբնոցը կանոնավոր չի աշխատում, որ խոփերը, մանգաղները սրելու համար բավական բարձր գներ է վերցվում, որ այնտեղ աշխատող աշկերտներին արտահագուստ չեն տալիս և այլն։

Դրա հետևանքով վերստուգիչ հանձնաժողովն առաջարկում է հետևյալ միջոցները. դարբնոցը բանալ առավոտյան ժամի 6-ին և փակել ժամի 2-ին, յուրաքանչյուր խոփ և մանգաղ սրելու համար գոյություն ունեցող գներն իջեցնել 50 կ., աշկերտներին տալ արտահագուստ և այլն։ Արձանագրությունը նման ձևով կազմելուց հետո ստորագրում են հանձնաժողո-

վի այն անդամները, որոնք մասնակցել են վերատուգմանը, գյուղխորհրդի նախագահը, կամ նրան փոխարինող անդամը, դարբնոցի վարողը։ Արձանագրության մի օրինակը մնում է վերատուգիչ հանձնաժողովի գործերում, յերկրորդը՝ ուղարկվում է գյուղական խորհրդին և յերրորդը՝ գավառակային գործադիր կոմիտեյին։ Իսնչպես պետք է վարվեն այդ արձանագրությունների հետ գյուղական խորհուրդը և գավառակային գործկոմը։ Նրանք պարտավոր են մանրամասն ուսումնասիրել վերատուգման արդյունքները, և այն դեպքում, յերբ համաձայնկլինեն վերատուգիչ հանձնաժողովի առաջադրություններին, պետք է միջոցներ ձեռք առնեն այդ առաջադրությունները կյանքում կիրարկելու համար։ Յեթե գյուղական խորհուրդը համաձայն չի լինում վերատուգիչ հանձնաժողովի առաջադրություններին, տարաձայնությունը լուծում է գավառակային գործադիր կոմիտեն։ Յեթե վերատուգման աշխատանքների մեջ գավառակային գործկոմը սխալներ և գտնում, նա պարտավոր է անմիջապես անել իր դիտողությունները և առաջարկել ուղղել թույլ տված սխալները։

ՎԵՐԱՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԶԵԿՈՒՅՈՒՄ Է ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ՅԵՎ ՀԱՇԻՎ Է ՏԱԼԻՍ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎԻՆ

Գյուղխորհրդի վերատուգիչ հանձնաժողովը միշտ հետու պետք է մնա «չինովնիկական»

վերատուգումներից։ Յեկա, տեսա, արձանագրեցի և էլ վոչ մի անելիք չունեմ—այս սկզբունքը խորթ պետք է լինի նրա համար։

Սկզբում ասվեց, վոր վերատուգիչ հանձնաժողովը մի կողմից էլ պետք է ոգնի գյուղխորհրդին ուղղելու այն բոլոր թերությունները, պակասությունները, վորոնք նկատվել են գործերի մեջ։ Դրա համար անհրաժեշտ է, վոր վերատուգիչ հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի անդամներից վորևե մեկը վերբատուգման արդյունքների մասին զեկուցի գյուղխորհրդին, ծանոթացնի նրան այն դրությանը վորը, ասենք, նրանք արձանագրել են դարբնոցի վերաբերմամբ։ Զեկուցելուց հետո կիրառեն գյուղխորհրդի անդամները, ներկա յեղողները, վերատուգիչ հանձնաժողովի անդամները կտան բացատրություններ, լրացումներ, և ընդհանուր խորհրդով կվորոշեն ամենալավ միջոցները ու յեղանակները, վորով կարելի լինի վերատուգիչ հանձնաժողովի առաջարկները կյանքում կիրառել, յեթե միայն այդ առաջարկները գործնական են, որինական ու նպատակահարմար, և յեթե նրանց հետ գյուղխորհուրդը համաձայն է. այլապես, ինչպես ասվեց, ատրաձնությունը լուծում է գավառակային գործկոմը, յեթե գյուղխորհուրդը և վերատուգիչ հանձնաժողովը վիճաբանություններից հետո մի ընդհանուր յեզրակացության չեն գա։

Վերատուգման արդյունքների մասին վերբա-

տուգիչ հանձնաժողովը պարտավոր է հաշիվ տալ ընտրողների ժողովին։ Որենքով նախատեսված ընդհանուր սկզբունք է, որ այդ հաշվետվությունը վերստուգիչ հանձնաժողովը տալիս է ամեն անգամ, երբ գյուղական խորհուրդը զեկուցում է անում իր գործունեության մասին, սակայն վոչ վոք չի արգելի վերստուգիչ հանձնաժողովին, եթե նա անկախ գյուղխորհրդի զեկուցումից ընդհանուր ժողովում դնի իր զեկուցումը և ծանոթացնի ժողովականներին վերստուգման արդյունքների հետ։ Այս բանն այն դեպքերում անհրաժեշտ կլինի, երբ մի վորևե հարց խիստ հետաքրքրում է գյուղացիներին, և երբ այդ հարցի շուրջը վերստուգիչ հանձնաժողովը հերթից դուրս վերստուգում է կատարել և երևան է բերել կարևոր հանգամանքներ, և երբ անհրաժեշտություն է զգացվում այդ հարցերի առթիվ լսել գյուղական մասսայի կարծիքը։ Վերստուգիչ հանձնաժողովը իր զեկուցումների մեջ վոչինչ չպետք է թագցնի. նա պարտավոր է տեղեկություններ տալու այն բոլոր վատնումների, գրաքն ապորինի ու անկանոն ծախսելու կամ գեղծումներ կատարելու մասին, վորը երևան է հանել գործի քննության ժամանակ։ Աշխատավոր գյուղացիներից վոչինչ չպետք է թագցնել, այլ ընդհակառակը ժամանակինները ուշադրությունը պետք է հրավիրել այն բոլոր թերությունների վրա, վորոնք գոյություն ունեն գյուղական աշխատանքների այս կամ այն ասպարեզում։

Ընդհանուր ժողովը, լսելով վերատուգիչ հանձնաժողովի զեկուցումը, իր հերթին պետք է կենդանի կերպով քննության առնե վերատուգիչ հանձնաժողովի կողմից առաջադրված հարցերը և իր դիտողությունները սա հերթական անելիքների մասին։

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՄԻԱՄՏԵԼՈՒ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Սակավ չեն այն դեպքերը, երբ մեր գյուղական խորհուրդները խառնվում են վերատուգիչ հանձնաժողովների գործունեությանը և այս կամ այն կարգադրություններն անում նրանց։ Այս բոլորովին սխալ գործելակերպ է, որից պետք է խուսափել։ Յուրաքանչյուր գյուղական խորհուրդ պետք է լավ իմանա, որ վերատուգիչ հանձնաժողովը իրեն ենթակա մարմին չէ, որ նա իրավասու չէ վերատուգիչ հանձնաժողովին որևե ցուցում տալու, առաջարկություն անելու, և որ ամեն մի քայլ՝ ուղղված վերատուգիչ հանձնաժողովի ինքնուրույնության դեմ, ապօրինի է և ենթակա է վերատուգիչ հանձնաժողովի հաջող գործունեության համար։

ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ԻՐ ՀԵՐԹԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՄԻԱՄՏԵԼՈՒ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՆՐԱ ՅԵՆԹԱԿԱ ՀԻՄՆԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Նախկին գլուխներում մատնանշվեց, որ

վերատուգիչ հանձնաժողովը բավական լայն իրավունքներ ունի գյուղխորհրդի և նրան յենթակա մարմինների ֆինանսա-տնտեսական գործունեության վերատուգման ասպարեզում. նա իրավունք ունի ցանկացած և անհրաժեշտ ժամանակին անցնել վերատուգման, վերատուգումների ժամանակ նա իրավունք ունի կանչելու գյուղական պաշտոնյաներին բացատրություն տալու համար։

Անհրաժեշտ դեպքում կարող է նայել գյուղխորհրդի, նրան յենթակա մարմինների բոլոր մատյաններն ու փաստաթղթերը. իրավունք ունի աշխատանքի համապատասխան ճյուղերը հետազոտելիս իրեն ոգնության հրավիրելու տեղական գործիչներից գիտակ անձանց-բժիշկներին, գյուղատնտեսներին, հաշվապահներին և այլն, և վերջապես վերատուգիչ հանձնաժողովի անդամները գյուղխորհրդի գործունեությանը հետևելու նպատակով կարող են ներկա լինել խորհրդակցական ձայնի իրավունքով գյուղական խորհրդի բոլոր նիստերին։ Սակայն որենքը, վերապահելով վերատուգիչ հանձնաժողովին այդ բոլոր իրավունքները, միաժամանակ թույլ չի տալիս նրան միջամտել գյուղխորհրդի և նրան յենթակա հիմնարկությունների, ձեռնարկությունների ընթացիկ գործունեությանը։ Վոչ մի վերատուգիչ հանձնաժողով չի կարող գալ և ասել «յես գյուղխորհրդին այս կարգադրությունը գտնելով սխալ, փոխում եմ և առաջադրում անել այս մեկը»։ Ցեթե

այդպես լիներ, այն ժամանակ դուրս կգա, որ գյուղում երկու իշխանություն կա — մեկը՝ գյուղխորհուրդը, իսկ մյուսը՝ վերստուգիչ հանձնաժողովը. մի բան, որ միանգամայն անթույլատրելի է և ճնշակար։ Վերստուգիչ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է լավ գիտակցի այս ոգեբունքը և թույլ չտա իրեն անմիջականորեն խառնվել գյուղխորհրդին, նրան յենթակա մարմինների ընթացիկ գործունեությանը։

ՈՎ Ե ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՀՐԱՀԱՆԳՈՒՄ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովի գործունեությունը ղեկավարում և դավառակային գործկոմը, որը պարտավոր է ուշադրությամբ հետևելու, թե ինչպես են աշխատում գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովները, նրանք վորքան հաջողությամբ կարողանում են լուծել այն հարցերը, որոնք դրված են նրանց առաջ, վորքան նպատակահարմար են այն դիտողությունները, առաջարկությունները, որ տալիս են վերստուգիչ հանձնաժողովները գյուղխորհուրդներին կամ նրան յենթակա հիմնարկություններին ու ձեռնարկություններին, արդյոք վերստուգիչ հանձնաժողովի անդամներն ներկա յին լինում գյուղխորհուրդի նիստերին, արդյոք կանոնավոր է գյուղխորհուրդների և վերստուգիչ հանձնաժողովների փոխհարաբերությունը, իրենց կատարած վերստուգումների մասին

վերատուգիչ հանձնաժողովները արդյոք զեկուցում են ընտրողների ընդհանուր ժողովին, գյուղխորհուրդների նիստերին, և ինչպիսի վերաբերմունք են ցույց տալիս վերջիններիը դեպի այդ զեկուցումները, արդյոք գյուղխորհուրդները ժամանակին իրագործում են վերատուգիչ հանձնաժողովի առաջարկությունները, կամ վերատուգիչ հանձնաժողովներն իրենց հերթին հետագա վերատուգումների ժամանակ հետաքրքրվում են այն հարցով, թե ինչպիսի ճշտությամբ են գյուղխորհուրդները կատարել այն բոլորը, ինչ վոր առաջադրված է յեղել նրանց, և նման այլ կարևոր հարցեր։

Վերատուգիչ հանձնաժողովների գործունեության մեջ այս կամ այն թերությունը նկատելիս գործկոմը պարտավոր է իր գրավոր դիտողությունը տալ նրանց, անհրաժեշտ դեպքերում իր անդամներից մեկին գործուղել գյուղ՝ ծանոթանալու տեղն ու տեղը վերատուգման արդյունքներին, այս կամ այն բացատրությունները տալու համար վերատուգիչ հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին հրավիրել գավառակային կենտրոն և այլն։ Միայն նման ուշադիր վերաբերմունքով, ուժեղ գրավոր և կենդանի կապի միջոցով հնարավոր կլինի գավառակային գործկոմի ղեկավարության ու հրահանգման գործը ուղիղ և արդյունավետ հիմքերի վրա դնել։

ՊԵՏՔ Է ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վերատուգիչ հանձնաժողովի կանոնադրության մեջ հիշված բոլոր խնդիրները այն ժամանակ կարելի կլինի իրագործել կյանքում, եթե մենք տեղերում ունենանք ուժեղ և կենսունակ վերատուգիչ հանձնաժողովներ։ Դրա համար անհրաժեշտ է, որ առաջիկա ընտրությունների ժամանակ վերատուգիչ հանձնաժողովների անդամ ընտրվեն գյուղացիներ, գեղջկուհիներ, բատրակներ, բատրակուհիներ, խորհրդային հասարակականության մոտիկ կանգնած ուսուցիչներ, բժիշկներ, հաշվապահներ, և աշխատավոր ինտելիգենտ այլ տարրեր։

Գյուղխորհուրդների վերատուգիչ հանձնաժողովների աշխատանքների աշխուժացումը մեծ չափով կախված է նաև գավառակային գործկոմների կանոնավոր ղեկավարությունից։

Կենտգործկոմի և Ցերևանի գավգործկոմի հրահանգիչները, հետազոտելով վերատուգիչ հանձնաժողովների գործունեությունը, արձանագրում են, որ «Գյուղխորհուրդների վերատուգիչ հանձնաժողովները կենսունակ չեն, և որ նրանց ղեկավարելու, հրահանգելու աշխատանքները գավառակային գործկոմի կողմից թույլ են և այլն»։

Հանրապետության տեսանելի մի շարք վայրերում հրահանգիչների կողմից նշված դրությունը խոչընդոտ և հանդիսանում վերատու-

գիչ հանձնաժողովների գործունեության աշխուժացմանը, մինչդեռ յեթե գավառական գործկոմները աշխատելով հետևեն գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքները կանոնավորելուն, կարճ ժամանակամիջոցում հնարավոր կլինի վերստուգիչ հանձնաժողովները դուրս բերել այժմյան պասսիվ դրությունից։

Վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքները աշխուժացնելու համար պետք է.— հրավիրել գյուղխորհուրդների նախագահների և վերստուգիչ հանձնաժողովների համագավառական մի քանի խորհրդակցություններ, վերստուգիչ հանձնաժողովների նախագահների զեկուցումները դնել գործկոմների նիստերում, այս կամ այն վերստուգումը կատարելու համար հատուկ հանձնարարություններ տալ վերստուգիչ հանձնաժողովներին, կանոնավորել գյուղխորհուրդների և վերստուգիչ հանձնաժողովների փոխհարաբերությունը, հսկել, որ վերստուգիչ հանձնաժողովները պարբերաբար ստուգեն թե որքան ճիշտ և լրիվ գյուղխորհուրդը իրագործել է իրենց առաջադրությունները ուժեղացնել հանձնաժողովների և ընտրողների կապը՝ հանձնաժողովի աշխատանքների մասին հաշիվ տալով ընտրողներին, մասսայականացնել վերստուգիչ հանձնաժողովների վերաբերյալ որենքները և այլն,—ահա վերստու-

պիչ հանձնաժողովների աշխատանքներն աշխատաժամանելու հիմնական և կարևոր նպատակն իրագործելու ճանապարհը։

Հայկենագործկոմի
Կապմ բաժնի վարիչի տեղակալ՝

Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅՔ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003216

ቁጥር 15 ካበማ.

084.

A II 23677